սուրերը, դանակները դուրս են նետում, օդի մէջ սուրալով անցնում, մխրճւում սրտերի մէջ, աղիքները տրորում: Բոլոր հերոսները, անցեալ ու ներկայ բեպերտուարների, խոսում են, ճառում, հառաչում, լաց լինում, ու մլաւոցի նման քամի ձեւացնող բարակ երկաթի մեքենան ձայնում է եւ թղթէ ալիքների վրայ պայթում:

Օթելլոն հասնում է Կիպրոս կղզի, իսկ Կասիոն հայհոյում է: Բրաբանցիոն դիակների վրայ պաղ ջուր է ածում: Դեզդեմոնան դուրս է եկել փողոց եւ մի չիչ Կոտիի համար ծախւում է: Սանդուկեանցը Թիֆլիսի բարբառով բացատրում է՝ ի՞նչ է պատմական մատերիալիզմը եւ Արխողոմ Աղան պրոֆմիութիւնների շուրջը խորհրդածութիւններ է անում.—

— Ցայտնի է ամենին, որ Դօն Ժուանը ոսկի ժամացոյց է գողացել...

Վարիչը իրեն վատ է զգում:

* * *

Մանկավարժական Թանգարանում թիթեռնիկները հանդիսատ են: Ցայտնի է, որ Լուսաժողկոմը ատում է Համալսարանը եւ դասախօսներին: Թիֆլիսի օրիորդաց գիմնազիայի բթամիտ այդ վարժապետիկը չի կարողանում նեբել, որ ուրիշները ունենան գիտութիւն: Այդ խեղճութիւնը իր դրասենեակի մէջ ամբողջ օրը տգիտութիւնից մրսում է եւ, եթէ չլինէին Մոսկուայի պաշտօնաթերթ «Պրավդան», ուր նա արածում է իր իմաստութիւնը եւ մեքենադիր դժբախտ օրիորդները, որոնց վրայ փորձում է իր ակնոցների տակ նստած խոզը, նա կը լինէր Մոնղոլիստան դրկուելիք, հայկական հին չորերի հակի մէջ, փալասի մի կտոր: Այսօր զարդարուած գորգ է, որի վրայ հրէայի մեծ ոտքերով ման է գալիս Կարլ Մարքսը:

Եկել է Թանգարան: Այսինքն՝ դրկել է իր շուքը: Երկար, արտառոց մօրուքով եւ ծակը փախչող մուկի աչքերով մի մարդ:

Հո՛ւպ տալ:

Հեշտ է ասել հուպ տալ: Թրքաց արշաւանքի շրջանից սկսած, ամբողջ Միջին դարը, իր պատմական մանրամասնութիւններով՝ Թուրք, մոնղոլ, արաբ՝ թառել են հարցաքննուող դասախօսի կարճատես աչքերի մէջ:

Նախագահը կուչ է գալիս: Իրեն անյարմար է զգում եւ, որպէսզի գուցէ պատի վրայ ճանճի հետք գտնի, մօրուքը երկարում է անորոշին:

— Բարի եղէք Ձեր անցեալ գործունէութեան մասին մեզ մի քանի տեղեկութիւններ տալ...

— Այսինչ թուականին աւարտել եմ Պետերբուրգի Համալսարանի լեզուաբանական ֆակուլտետը. երկու տարի յետոյ քննութիւն տալով՝ աւարտել եմ Մոսկուայի իրաւաբանական ֆակուլտետը եւ այսինչ ճեմարանի տեսչութիւնն եմ ստանձնել: Երեք տարի յետոյ աւարտել եմ Միւնխենի պատմագրական ֆակուլտետը, յետոյ Բերլինի սոցիալիստական գիտութեան ֆակուլտետը, յետոյ Դրեզդենի...

Ֆակուլտետները՝ նախագահի առջեւ լեզգինկա են պարում: Աչ կողմում նստած օրիորդը սարսափած մտածում է, թէ արդեօք կոմունիստական տեսակէտից ներելի՞ է թիթեռնիկների փորին գնդասեղ անցնել. իսկ ձախ կողմինը գտնում է, որ նոյն կոմունիստական տեսակէտից այդքան գիտութիւնը միանգամայն բուրժուական է եւ նացիոնալիստական, որ մինչդեռ խեղճ պրոլետարիատը՝ ինքն էլ նրա հետ՝ տգիտութեան եւ աղբի մէջ է թաւալւում, այս մաքուր օձիքով մարդը լեցուն է աւելորդ նախապաշարումներով:

— Այսինչ թուականին «Աւղանեան արշաւանքների» մասին իմ գիրքը թարգմանուեց գերմաներէնի. այս միւս թուականին Պետերբուրգի Ակադեմիան հրատարակեց իմ «Նախապատմական Գերեզմանաքարերի» գիրքը, մինչ Բերլինի Կայսերական Հնագիտական ընկերութիւնը լոյս էր ընծայում յունահայ բառերի իմ մանրամասն ուսումնասիրութիւնը: 1912-ին էջմիածնի այսինչ թիւ ձեռագրի մէջ ես գըտայ...

— ... 14-ին թողնելով Կիեւի համալսարանի ինձ յանձնած ամբիոնը, անցայ Խարկովի վիրաբուժական հիւանդանոց եւ ստացայ պրոֆեսորի աստիճան:

— ...Մանրէների մանրամասն ուսումնասիրութիւնը ինձ մղեց ստեղծել առանձին մի ապարատ, որով...

— ...Թէպէտ այն շրջանին էյնշտէյնի տե-

Հայ մատենագրության թուանշանային գրադարան